

րենիք մը ըլլալով իրենց պարիսպներով՝ հագած զրահը մեր ցեղային յատկութիւններուն»:

Պատրիարքը կը զգուշացնէր պահել հաւասարակշռութիւնը հոգեւոր եւ ազգային տարրերուն միջեւ, թէ հայ եկեղեցին միայն ազգապահպանման ազդակ մը չէ, այլ անկէ առաջ հաստատութիւն մը որուն կառոյցին մէջ ծաղկած են այն ստեղծագործութիւնները որոնք անոր ազգային նկարագիրը կազմեցին:

Հաւարին Փակումը

Զեկուցումները բարեյաջող անցան ու փակման խօսքը տրուեցաւ նախ Շնորհք Պատրիարքին, իր խօսքերով «այս շատ գնահատելի ձեռնարկին համար», թելադրելով որ «Սաղիմական Ականդեմիա» մը կազմուի այս նոյն դպրոցէն ելած նոյն հոգեւորականներուն կողմէ: Ապա Եղիշէ Պատրիարք շնորհակալութիւն յայտնեց Շնորհք Պատրիարքին իր ներկայութեան եւ մասնակցութեան համար որուն վերջին թելադրութիւնը տեղին եւ գործադրելի նկատեց: Յատուկ յոբելինական նշումով միաբաններ մասնակից դարձան Զաքարիա Պատրիարքի ծննդեան 200, եւ Եղիշէ Դուրեան Պատրիարքի մահուան 50-ամեակներու յուշահանդէսին: Նոյն առիթով «Սիոն» ամսագրի բացառիկ թիւ մը լոյս տեսաւ է-Ժ միացեալ համարով, ուր մանրամասնօրէն արձանագրուեցաւ Հաւարին ընդհանուր գործընթացը հարիւրամեայ պատմական հարուստ տուեալներով:

ԴՈԿՏ. ԶԱԻԷՆ ԱԻ. ՔՇՆՅ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

ԳՐԱԲԱՐԵԱՆ ԱՍՈՅԹՆԵՐ

Իբրեւ հաւատայ՝ սիրէ. և իբրեւ սիրէ՝ յուսայ. և իբրեւ յուսայ՝ արդարանայ:

Ոչ նորոգի, զի ոչ հնանայ, ոչ մանկանայ, զի ոչ ծերանայ:

Ահաւասիկ տեսանեմ զի արեգակն գնայ, լուսին և աստեղք ընթանան, ամպք սլացեալք տարածանին:

Ամենեւին գեղեցիկ ես, մերձաւոր իմ, և արատ ինչ ոչ գոյ ի քեզ:

Աղուէս, դո՞ւ էիր խանգարիչ՝ որ այսչափ աշխատ արարեր զմեզ. դո՞ւ ես այն, որ կոտորեցեր զԱրիս այսչափ ամս, և զի՞ գործես զմահ աղուէսու սպանից զքեզ:

Եթէ հաւաստեալ խնդրիցեմք, գտանիցեմք:

Յորժամ դուստր զմայր անարգիցէ, և նու զկեսուր իւր: